Զանգեզուրում օղեքաշությունը ժողովրդի բարօրության մեջ մի այնպիսի խոշոր աղբյուր չէր, ինչպիսին էր այդ ճյուղը Լեռնային Ղարաբաղում, որտեղ արտահանվող արտադրանքների մեջ օղին բռնում էր առաջնակարգ տեղերից մեկը։ Օղին քաշում էին ջէջից[93], վայրի պտուղներից, բայց առավելապես թթից՝ զուտ տեղական գործածության համար։ Թեև Զանգեզուրի անտառները հարուստ են վայրի պտուղներով, օրինակ՝ ճոնավ, այնուամենայնիվ, օղին գերադասում են քաշել թթից։

Քաշելու սարքավորումը շատ պարզ ձև ունի։ Մի քանի հասարակ քարերով կազմված օջախի կրակի վրա դրվում է կոնաձև ղազան. նրա վրա որպես կափարիչ ծածկվում է կիսակլոր պղնձե թաղար, որի գլխին ամրացված է «Ռ» գլխատառի ձև ունեցող լայն խողովակ։ Եփվող թթի գոլորշիները փոխադրվում են երկու կոնեավ՝ երկու ծունկերով, կոներով 1,5-ից մինչև 2 մետր երկարություն և 7—8 սմ տրամագիծ ունեցող հորիզոնական լուլան՝ խողովակը։ Լուլան զետեղվում է փայտե նավի՝ նավի մեջ, երբեմն ուղղակի աղբյուրից հանած առվակի մեջ, որտեղ շարունակ հոսող ջուրը սառեցնում է գոլորշիները և արդեն պատրաստի արաղը լուլայի ծայրից կաթկթում է տակը դրված որևէ ամանի մեջ։ Ամբողջ սարքավորումը պղնձից է։

Մի ամանից մյուս ամանը թե՛ օղին և թե՛ առհասարակ որևէ հեղուկ՝ գինի, ձեթ, նավթ ածելու համար գործ է ածվում պղնձե ձագար՝ ռաճաթի։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Եթե ոչխար կթելը թույլ էր տրվում և տղամարդուն՝ չոբանին, ապա կով կթելը զուտ կանացի գործ էր, ինչպես և կաթի ամբողջ վերամշակումը։ Այստեղ էլ պիտի որոշ մագիկ միջոցներ ձեռք առնվեին, որ կովը շատ կաթ տար, որ կաթնատվությունը երկար տևեր, որ կաթի յուղայնությունը մեծ լիներ և այլն։ Այսպես՝ թույլ չէր տրվում կովերի մեջ մեկը ման գա դատարկ ամանը ձեռքին՝ կաթը կպակասեր կամ անասունի մեջ վարակիչ հիվանդություն կընկներ և տերը կմնար դատարկ։ Կովի կողքին կրակ չպիտի վառվեր, որովհետև կաթ տալուց կդադարեր, կչորանար։ Եթե կթելիս մի մարդ մտներ և կաթը քիչ կթվեր՝ այդ մարդը կդիտվեր որպես ծանր վոտ ունեցող և նրանից խույս պետք էր տալ և ներս չպետք էր թողնել թե՛ կով կթելիս և թե՛ խնոցի հարելիս։

Կաթը կթում էին քթէնի կամ բադիայի և փաթիլի մեջ։ Կթելուց հետո քամում էին բամբակի թելից գործած կրբնիքամիի օգնությամբ։ Եթե ուզում էին, որ կաթը միշտ առատ լինի՝ Համբարձման օրը հավաքում էին խոտերի վրայից առավոտյան ցողը և ավելացնում կաթի վրա։ Այդ օրը նվիրված էր հենց կաթին։ Այդ օրվա ամբողջ կաթը բաժանում էին աղքատների մեջ։ Այսպիսով, առատաձեռնությամբ խրախուսում էին նաև բնության գաղտնի ուժերի առատաձեռնությունը։ Այդ նախնական մտածողությունից բխում էր նաև մի այլ սովորություն, որը նպատակ ուներ առատաձեռնությամբ կաթի առատությունն ապահովելը։ Նոր ծնած կովի առաջին օրվա կաթը եփում էին առանց

[93] Մզած խաղողի մնացորդներից՝ ճաճ, ճաճա։ Մեղրու բարբառով՝ ճէոնը։